ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Г. Д. Вардумян, Дохристианские культы армян. Армянская этнография и фольклор (материалы и исследования), № 18, Ереван, 1991, изд-во АН Армении, с. 60—146, 13 с. илл .

Գ. Դ. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ, Հայոց նախաքրիստոնեական պաշտամունքը [Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ), թիվ 18, Երևան, 1991 ՀԱ հրատ.) էջ 60—146, 13 լ. լուս.]։

Հայաստանի ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 18-րդ պրակում տեղ է գտել նաև Գոհար Վարդումյանի «Հայոց նախաքրիստոնեական պաշտամունք» աշխատությունը։ Այն կազմված է նախաբանից, երեք գլխից, վերջաբանից, օժտված է գրչանկարների և լուսանկարների հարուստ ընտրանիով։ Ռուսերեն է։ Աշխատանքի առաջին գլուխը նվիրված է Հայաստանի կրոնի ու պաշտամունքի վաղագույն սկզբնաղբյուրներում վկայված կրոնական համակարգերի հակիրճ քննությանը։ Հեղինակն այստեղ հանգամանորեն անդրադարձել է հայ-հայասական, հայ-հեթիթ-խուռիական, հայ-ուրարտական պաշտամունքային փոխառնչությունների հիմնահարցին, իրավամբ եզրակացնելով, որ կրոնական այս համակարգերն ուրույն ազդեցություն են ունեցել հին հայկականի վրա։ Ասենք, որ այս համակարգերից և ոչ մեկը (բացառություն չէ և հայասականը) չի կարելի դիտարկել որպես հայ հեթանոսական կրոնի վաղագույն շերտ, քանի որ դրանք ինքնուրույն էթնոմշակութային ամբողջությունների համակարգեր էին և չեն համընկնում հին հայկական կրոնի հետ։ Բացառվում են պաշտամունքային կենտրոնները, որոնք, ինչպես իրավամբ մատնանշում է հեղինակը, շատ հաճախ նույնանում են։

Աշխատության առաջին գլուխը խիստ հետաքրքիր է և գրեթե ամբողջական պատկերացում է տալիս Հայկական լեռնաշխարհում գոյատևած կրոնական այն համակարգերի մասին, որոնցում այս կամ այն կերպ արտահայտություն է գտել նաև զուտ հայկական ծագում ունեցող աստվածությունների պաշտամունքը։ Գրեթե, քանզի հեղինակը շատ հպանցիկ է անդրադարձել լուվիական [կամ, ինչպես առաջարկվում է անվանել այժմ՝ վաղ հայկական (ակադ. Գ. Սարգսյանը), մասնավորապես և Մելիտենեի կամ Թեգարամայի (առն Թորդոմայ)] կրոնական համակարգին, որը մինչ այժմ հանգամանորեն ուսումնասիրված չէ մեզնում և չի համադրված հայկական ազգագրական նյութի հետ։ Ցանկալի է, որ հենց Գոհար Վարդումյանը ուսումնասիրությունները շարունակի այս կտրվածքով։

Աշխատության հաջորդ գլուխը նվիրված է հայերի աստվածություն-նախահայրերի և էպիկական հերոսների պաշտամունքին։ Քննարկվում են Հայկի և Բելի, Արամի, Արա Գեղեցիկի ու Շամիրամի, Տորք Անգեղի առասպելները և արվում է հետևյալ կարևոր եզրակացությունը. առասպելներում յուրօրինակ արտացոլում են գտել ոչ միայն այն անհիշելի ժամանակների իրադարձությունները, այլև Առաջավոր Ասիան այն ժամանակներում բնակեցնող ժողովուրդների էթնոմշակութային փոխառնչությունների ձևերն ու առատությունը։ Իրավամբ այդպես է, սակայն Գոհար Վարդումյանն իր առջև հարց չի դրել ճշտելու այդ անհիշելի ժամանակների գեթ մոտավոր թվագրությունը և կամ այն իրադարձությունները, որոնք արտահայտություն են գտել տվյալ առասպելներում։

Այս բնույթի աշխատությունում, նման մոտեցումը, թերևս, պարտադիր չէ. սակայն այդպիսի փորձը, անկասկած, կարող էր ավելի ամրապնդել վերոհիշյալ տեսակետը։ Մասնավորապես ասենք, որ այժմ բավականին հիմնավորված ձևով, օրինակ Հայկի և Բելի առասպելի ծագումը, հետևելով Ղևոնդ Ալիշանին, սակայն հենվելով բոլորովին այլ փաստական նյութերի վրա, թվագրվում է մ. թ. ա. III հազարամյակի վերջին քառորդով և կարծես թե հաջողվում է գտնել նաև Բելի մահկանացու նախակերպարներին՝ հանձին Նարամսուեն (Է. Դանիելյան) և Թգլաթպալասար Ա արքաների։ Այսպիսի աչք ծակող կոնկրետությունը տարօրինակ չպիտի թվա, քանզի հստակ հայտնի է, որ, օրինակ, Սանասարի ու Բաղդասարի կերպարները ներառել են մանրամասներ Սինախերիբի որդիների՝ Արադ-Նինլիլի (Ադրա-

մելնք) և Շարուսուրի (Սարասար) ճակատագրերից. էպիկական հերոսներ ու անսպառ մի նյութ, որի քննությանը ցավոք չի անդրադարձել հեղինակը։

Աշխատության հիմնական ու առանձնահատուկ ուշագրավ գլուխը երրորդն է՝ «Համահայկական դիցարանի աստվածությունների պաշտամունքը», որը կազմված է երեք ենթագլխից։ Առաջինում քննվում է դիցարանի բարձրագույն աստվածային զույգի՝ Արամազդի ու Անահիտի պաշտամունքը։ Երկրորդ ենթավերնագիրը նվիրված է դիցարանի մյուս գլխավոր աստվածությունների՝ Արամազդի ուստերների (Վահագն, Միհր, Տիր) ու դուստրերի (Աստղիկ. Նանե) առասպելաբանաստեղծական կերպարների քննությանը։ Երրորդ ենթագլուխը նվիրված է Ամանոր, Վանատուր, Սպանդարամետ, Գիսանե, Դեմետր և Բարշամին աստվածությունների պաշտամունքին։ Գլուխն ավարտվում է Հայաստանի տաճարների ու քրմության մասին եղած նյութի հակիրճ քննությամբ։ Ինչպես ամբողջ գրքի, այնպես էլ այս գլխի հիմնական առավելությունն այն է, որ Գոհար Վարդումյանը իր նախորդների առաջարկած շատ տեսակետներ կարողանում է փաստարկել դիպուկ՝ զուտ աղբյուրագիտական դիտողություններով (մասնավորապես նրան հաջողվել է վերջնականապես ապացուցել, որ Վանատուրն ու Ամանորը, այնուամենայնիվ, միմյանց լրացնող, սակայն և ինքնուրույն աստվածություններ են, որոնք դիտվել են որպես ամուսիններ)։ Գրքի շարադրանքի ընթացքում Գոհար Վարդումյանը ձգտում է օգտագործել և ընթերցողին մատուցել տվյալ հարցին վերաբերող առկա ամբողջ (նաև աղբյուրագիտական) նյութը, որի վերլուծությունը մեծ մասամբ համողիչ է։ Այստեղ արժե անդրադառնալ հին Հայաստանի կրոնի ուսումնասիրության անկյունաքարային հիմնահարցին, որը բարձրացված է և այս գլխում։ Վերլուծելով Արամազդի, Անահիտի, Միհրի կերպարները, Գոհար Վարդումյանը անում է հետևյալ երկու եզրակացությունը՝ 1. Հին Հայաստանի գլխավոր աստվածությունները ժառանգել են նախորդած ժամանակաշրջաններում Հայաստանում գոյատևած էթնոքաղաքական միավորումների գլխավոր աստվածությունների հիմնական գծերը. մասնավորապես, Արամազդի կերպարում յուրօրինակ ձևով միաձուլվել են Հայասայի գլխավոր աստծո (հնչյունագիր անունը ստույգ հայտնի չէ), Խալդիի և Հայկի պաշտամունքները (էջ 106)։ Անահիտի կերպարում՝ Հայասայի գլխավոր դիցուհու, Արուրանիի և Շավուշկայի կերպարները (էջ 107)։ 2. Միևնույն ժամանակ, նա մատնանշում է, որ Արամազդի, Միհրի, հնարավոր է նաև Անահիտի անունները ոչ թե իրանական են, անցած Հայաստան, այլ տեղական են, իսկ համահնչյունությունը բացատրվում է պարսկերենի ու հայերենի աղբակից լինելու հանգամանքով (էջ 106—107, 116)։

Հեղինակը անում է սկզբունքորեն ճիշտ եզրակացություններ. իսկապես Հայաստանում տարածված էր սինկրետիզացիայի երևույթը (չնայած, ի տարբերություն Գոհար Վարդումյանի, Հայկին ընկալում եմ Թեշուբի, իսկ Խալդիին՝ Միհրի հետ միաձուլված), և որ, իսկապես, հիշատակված հին հայկական աստվածությունները Հայաստանում ունեցել են նաև իրենց նախապատմությունը։ Սակայն մի բան պարզ չէ. եթե կար զուտ Հայկական Արամազդ, Միհր և Անահիտ (Իրանից անկախ), ապա գրքի առաջին գլխում քննված համակարգերից որի՞ մեջ են նրանք թաքնված։ Այս հարցը չի դրվում, իսկ եթե դրվեր, ապա թերևս գտնվեր պատասխանը, որի բանալին ժամանակին տվել է Աստուր Մնացականյանը իր՝ մեզանում ցավոք անուշադրության մատնված «Մաշտոց անվան ստուգաբանությունը» (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1979, № 8, էջ 81—92) հոդվածում։ Ա. Մնացականյանի կարծիքով Ահուրամազդան համապատասխանում է Մուծածիրյան Բաղմաշթուին, որը նույն Արուրանին է և որն իր դրսևորումներից մեկով, որպես Արբելայի Իշթար, իսկապես նույնացել է Անահիտի հետ։ Ընդ որում թե Միթրայի և թե Վարունայի վաղագույն հիշատակությունը գտնում ենք մ. թ. ա. 1380 թ. թվագրվող հեթիթ-խուռիական մի վավերագրում։ Ուշագրավ է, որ Ժ. Դյումեզիլի կարծիքով Վարունան է, որ ավելի ուշ վերանվանվեց Ահուրամազդայի։ Կարծում եմ, սա է այն ուղին, որը կարող է տանել դեպի հիմնահարցի էլ ավելի համակողմանի ըմբռնմանը։ Գիրքն ավարտվում է վերջաբանով, որն ամփոփում է կատարված աշխատանքը։ Այսպիսով, ընթերցողի սեղանին է մի աշխատություն, որը շահեկան է հատկապես նեղ մասնագետների համար։ Այն կարող է ծառայել նաև իբրև բուհական ձեռնարկ. թեպետ կան ոչ սակավաթիվ սրբագրական վրիպակներ, որոնց պատասխանատվությունը, չեմ կարծում թե ընկնում է միայն հեղինակի վրա։

Ս. Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու